ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

11.12.2023 թվականին կնքված **N ՆՍԾՏԻԿ-ԲՄԾՁԲ-23/34-2** գնման պայմանագրի

ք. Երևան «18» 12 2023թ.

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն՝ Ա. Պարզյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Իսկանդարյան Նարինե Ֆ/Ա-ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 11.12.2023թ. կնքված **N ՆՍԾՏԻԿ-ԲՄԾՁԲ-23/34-2** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 7.5 և 7.15 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման համար հատկացված առավելագույնը **8,400,000.00 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ (Կատարողի հավաստմամաբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող)**, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	Իսկանդարյան Նարինե Ֆ/Ա
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68	ք.Երևան, Կոմիտասի պողտա 56/46
«Արդշինբանկ» ՓԲԸ	«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480102656710000	Հ/Հ 11813019432701
ՀՎՀՀ 02602449	Ն/Ք 006442636
Գործադիր տնօրեն՝----------Ա.Պարզյան (ստորագրություն) Կ.Տ.	Ֆ/Ա ----------Ն. Իսկանդարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«11» դեկտեմբերի 2023թ. կնքված
N ՆՄԾՏԻԿ-ԲՄԾՁԲ-23/34-2 ծածկագրով պայմանագրի
«18» 12 2023թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ծառայության անվանումը	Չ/մ	Ընդհանուր քանակը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2023-2024թթ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝													
					2023թ.	2024թ.												
					XII	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդհանուր գինը
2	72261110/550	Ծրագրային ապահովման մշակման խորհրդատվական ծառայություններ2	դրամ	1	700000	1400000	2100000	2800000	3500000	4200000	4900000	5600000	6300000	7000000	7700000	8400000	8400000	8400000
Ընդամենը՝																		**8,400,000.00**

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

** Պատվիրատուն վճարումը կատարելու է իրեն փաստացի մատուցած ծառայության դիմաց՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, մինչև պայմանագրի կատարման ավարտը պահանջ չներկայացվելու դեպքում պայմանագիրը լուծվելու է, առանց որևէ իրավական պարտավորության:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

««Նորք» սոցիալական ծառայությունների
տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480102656710000
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն՝ _____ Ա. Պարզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Իսկանդարյան Նարինե Ֆ/Ա
ք.Երևան, Կոմիտասի պողոտա 56/46
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813019432701
Ն/Ք 006442636

Ֆ/Ա _____Ն. Իսկանդարյան
(ստորագրություն)
Կ.Տ.